# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ԱՄՄԲ-ԳՀԾՁԲ-25/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**Մեծամոր համայնք** **12 մայիսի 2025թ.**

2025թ մայիսի 7-12-ը, ՀՀ, Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, ք. Մեծամոր, Վարչական կենտրոն թիվ 1 շենք հասցեում գտնվող՝ «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի գրասենյակում, տեղի ունեցավ ավտոլվացման ծառայությունների ձեռքբերման ԱՄՄԲ-ԳՀԾՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Վ. Հակոբյան | «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի տնօրենի օգնական, |
| Հ. Պետրոսյան | «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի Ճարտարագետ, |
| Կ. Մնոյան | «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի պահեստապետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Հակոբյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, Վ. Էլոյանը՝ «ՓՐՈՄՈՒՈՏՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1.Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:

2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:

3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին՝ դրանց համապատասխանության մասին:

4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու, հայտարարության տեքստը հաստատելու մասին և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. մայիսի 7-ին կենտրոն թիվ 1 շենք հասցեում գտնվող «Մեծամորի Բարեկարգում» ՀՈԱԿ-ի գրասենյակում ժամը 12:00-ին Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ Ընթացակարգն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային արժեքը.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Մատուցվող ծառայությունների միավորի գինը /ՀՀ դրամ/ | Գնման առավելագույն գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Ավտոմեքենաների լվացման ծառայություններ | 5,000.00 | 1,500,000.00 |

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց տեղեկատվություն գրանցամատյանում կատարված նշումների մասին և Հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԱՄԲ-ԳՀԾՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | «Անուշ Հակոբյան Ռուբենի» ԱՁ | 49545082 | ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր, 24-րդ փողոց 1 | +37493582577 | hakobyananushvazg@mail.ru |

Հանձնաժողովը գնահատեց հայտ պարունակող ծրար/ներ/ը կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակից/ներ/ի կողմից ներկայացված հայտ/եր/ը կազմված և ներկայացված է/են Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, և բացեց համապատասխան գնահատված հայտ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ՝ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց,

որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉԾԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի անվանումը | | Մասնակցի անվանում | Մատուցվող ծառայությունների միավորի գինը /ՀՀ դրամ/ | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Հայերեն | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ավտոմեքենաների լվացման ծառայություններ | «Անուշ Հակոբյան Ռուբենի» ԱՁ | 5000 | 1500000 | 0 | 1500000 |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. մայիսի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Անուշ Հակոբյան Ռուբենի» ԱՁ | բավարար |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ/ՉՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների արդյունքում տեղի է ունեցել գնման գնի գերազանցում, 2025թ. մայիսի 12-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

2. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

3. Հաստատել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:
2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:
3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:
4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Հակոբյան

Հանձնաժողովի անդամներ՝

Հ. Պետրոսյան

Կ. Մնոյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վ. Էլոյան